# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-25/17 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **08 հունվարի 2026թ.**

2025թ. դեկտեմբերի 29-ից 2026թ. հունվարի 08-ին, ՀՀ, ք. Երևան, Արովյան 27 հասցեում գտնվող «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի տեղի ունեցավ փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների ձեռքբերման ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-25/17 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Վ. Պետրոսյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի «Էներգակապ» մ/ճ-ի ավտոտրանսպորտի և մեխանիզացիայի ծառայության պետ,

Ռ. Մարգարյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի «Էներգակապ» մ/ճ-ի ավտոտրանսպորտի և մեխանիզացիայի ծառայության պետի տեղակալ,

Ա. Գևորգյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի «Էներգակապ» մ/ճ-ի տնօրենի տեղակալ,

Ա. Հովսեփյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի «Էներգակապ» մ/ճ-ի տեխնիկական բաժնի պետ,

Ա. Արշակյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի «Էներգակապ» մ/ճ-ի կադրերի գծով ավագ տեսուչ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Պետրոսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Մելքոնյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները վերագնահատելու անհրաժեշտության, բանակցությունների վարման և դրանց արդյունքների վերաբերյալ:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ, ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025թ. դեկտեմբերի 29-ին Հանձնաժողովի քարտուղար Ս. Մելքոնյանը Հանձնաժողովին տեղեկացրեց, որ 19-րդ չափաբաժնի մասով հայտերի գնահատման մասով տեղի է ունեցել վրիպակ և վերագնահատման արդյունքում պարզվել է, որ նշյալ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հավասար են միմյանց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշեց.

1. Հանձնաժողովի նիստը կասեցնել 2 աշխատանքային օրով՝ Ընթացակարգի ընտրված մասնակից որոշելու նպատակով և 19-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատված մասնակիցներին՝ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին և «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:
2. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 2026թ. հունվարի 07-ին ժամը 14:00-ին, ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27 հասցեում գտնվող «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի շենքում:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ 2026թ. հունվարի 07-ին ժամը 14:00-ին ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27 հասցեում գտնվող «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի շենքում հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին բավարար գնահատված և բանակցություններին հրավիրված մասնակիցներից ոչ ոք ներկա չէր:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026թ. հունվարի 08-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.
2. Ընթացակարգը՝ 19-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ս. Մելքոնյանը Հանձնաժողովին ներկայացրեց ընթացակարգը 19-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստի նախագիծը:

2026թ. հունվարի 08-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել ընթացակարգը 19-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Պետրոսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ռ. Մարգարյան ____________

Ա. Գևորգյան ____________

Ա. Հովսեփյան ____________

Ա. Արշակյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ս. Մելքոնյան ____________